հոգեւոր իշխանութիւնը պարզած լինէր այդ երէցփոխներին օրէնքի պահանջը՝ նախ ծուխին հաշիւ տալու պարտաւորութեան մասին. բնաւ ոչ. այդ է պատճառը, որ երէցփոխները, քաջալերված կոնսիստորիայի բռնած ընթացքից, ծուխից միշտ անկախ են գործում, ճանաչելով իրանց վրա միայն հոգեւոր առենի իշխանութիւնը: Ձերծ մնալով ծուխի հսկողութիւնից եւ միւս կողմից օգտվելով հոգեւոր իշխանութեան անհոգութիւնից ու թուլութիւնից, այդ պաշտօնեաները շատ անգամ մի շարք օրինազանցութիւններ են կատարում...

...

Թիֆլիսի Քամոյենց եկեղեցու հետ 2 տարի առաջ պատահած դէպքը: Քաղաքի այդ հարուստ եւ նշանաւոր եկեղեցու նախկին երէցփոխը լաւ էր հասկացել, թէ ինչ կերպով կարելի է կոնսիստորիայի վստահութիւնը գրաւել եւ իր չորսամեայ երէցփոխութեան ընթացքում ծուխին ոչ մի հաշիւ չէր տուել, ճանաչելով իրան միայն կոնսիստորիայի պաշտօնեայ. ժողովրդի մէջ լսվում էր տրտունջ եւ անբաւականութիւն, բայց ո՞վ էր ուշադրութիւն դարձնողը. սակայն եթէ ծուխի լիազօրը (ինչ հեղինութիւն) բանի տեղ չէր դնում իր ընտրողների ձայնը, կար, հօ՛, Թիֆլիսում մի հաստատութիւն, որ համաձայն 14 պարբ. 1188 յօդուածի ԺԱ. տ. Ա. մ. պետ. օր. պարտաւոր էր իւրաքանչիւր ամիս ստուգել երէցփոխի մօտ գտնված գումարները ու հաշուեմատեանները եւ տարին մի անգամ ընդհանուր տեղեկագիր պահանջել: Մեզ յայտնի չէ, եղե՞լ էր արդեօք որ եւ է հսկողութիւն այդ երէցփոխի գործունէութեան վրա. միայն այսքա...

...

չունի առանց ծուխի գիտութեան եւ համաձայնութեան կատարել հոգեւոր իշխանութեան պաշտօնական առաջարկները. եթէ ծագէ որ եւ է անհամաձայնութիւն ծուխի եւ կոնսիստորիայի մէջ, գործը յանձնվում է էջմիածնի սինոդի հայեցողութեան եւ կարող է հասնել մինչեւն կառավարչական Սենատ, եթէ գործից օրէնքի մեկնութեան խնդիր է յարուցվում: Ե. Հսկողութիւնը երէցփոխի պաշտօնավարութեան վրայ, պէտք է լինի ոչ ձեւական, այլ իրական, ուստի հոգեւոր առենը պարտաւոր է ունենալ մի մասնագէտ հաշուապահ եւ նրա միջոցով կատարել երէցփոխական հաշիւների քննութիւնը, իսկ ծուխը իր միջից ընտրում է հաշուետեսների մասնաժողով, որ քննում է երէցփոխի տարեկան հաշիւը եւ այդ ներկայացնում պատճառաբանեալ զեկուցում...

ծխականների ընդհանուր ժողովին: Զ. Երէցփոխը պարբերաբար ծխականներին ժողովի է հրաւիրում, ընթացիկ նշանաւոր խնդիրները կարգադրելու համար: Այդ խնդիրների շարքում կան այնպիսիները, որոնք հէնց այժմ կարօտ են ծուխի շտապ լուծման, իբրեւ ընթացիկ կեանքի անողոք պահանջներ, ինչպէս օրինակ, միսիոն—քահանաների նիւթական ապահովութեան խնդիրը, ներդաշնակ երգեցիկ խումբ եւ հնուտ խմբապետ ունենալը. ծուխի շրջանում գտնված անկեալներին եւ աղքատներին խնամելը, կրթված քարոզիչներ հրաւիրելը, եկեղեցական կարգապահութիւն մտցնելը, եկեղեցում թարախ ման ածելու ագեղ սովորութեան վերացումը, եկեղեցական արխիվ հիմնելը ...

...

գնեն. միայն վերջին ժամանակ մենք նկատում ենք մի քանի ծխական համայնքների կողմից գովելի ձգտում բռնելու որ ծուխը պահուի կազմակերպված, թողնելով ասպարէզը գործելու անընդունակ մեր հոգեւորականութեան:

# Արտաքին Լուրեր

## Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Ռուզվէլթ նախագահը.— Զրանցքին խնդիրը.— Ծերակոյտը.— Երեսփ. ժողովը.— Ամերիկեան մամուլը.— Կախուած կամուրջի մը փլչիլը:

Լոնտոն, 21 յունիս.— Նիւ-Եորքէն կը հեռագրեն թէ Մ. Նահանգաց նախագահ Պ. Ռուզվէլթի եւ հանրապետական կուսակցութեան պետերուն միջեւ վէճը տակաւին կը շարունակէ: Նախագահը հաստատ կը մնայ իր առաջուան ընթացքին վրայ, սակայն քաղաքական շրջանակներուն մէջ հաւանական չի նկատուիր որ Մ. Նա...

...

Լոնտոն, 21 յունիս.— Նիւ-Եորքէն կը հեռագրեն Տէյլի Թէլէկրաֆի.— Կը ծանուցուի թէ հարաւային Քարոլինի երկաթուղիի գիծին վրայ, Շէլվիի մօտ, կախուած կամուրջ մը փլեր է՝ կառախումբ մը անցնելու միջոցին: Կառախումբին մեքենավարը, վտանգը տեսնելով, ամբողջ շոգին թող տուեր է՝ փլուզումէն առաջ անցնելու յուսով, բայց կառախումբին երեք քառորդը անցնելէ ետքը կամուրջը փլեր եւ երկու վակոններ ջուրը ինկեր են: Տասը հոգի խեղդուեր են:

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Թագադրութեան հանդէսը.— Սկովտացիները.— Անգլիական մարտանաւերը.— Արգիլուած պատերախաղ մը Լոնտոնի մէջ.— ...

...

ութեան տաղանդաւորութեան տակ պիտի դնեն, նաւատորմին աչքը պիտի ըլլան. ոչ միայն իբրեւ հետազօտիչ պիտի գործածուին, այլ իբրեւ պաշտպան վաճառականութեան աշխարհի բոլոր կէտերուն վրայ:

## ԱՆԳԼԻՈՅ ՆԱՒԱՏՈՐՄԸ

Երեսփ. ժողովին մէջ.— Նաւատորմին վիճակը.— Լորտ Պէրէսֆորտի քննադատութիւնները.— Ծովային նախարարութեան լաւատեսութիւնը:

Լոնտոն, 20 յունիս.—Անգլիոյ Երեսփ. ժողովին մէջ, այսօր, վիճաբանութիւն կատարուեցաւ Անգլիոյ նաւատորմին կացութեանը վրայ: Լորտ Չարլս Պէրէսֆորտ յայտարարեց թէ Անգլիոյ նաւատորմին հիմակուան կացութիւնը չի համապատասխաներ իր կոչումին: Պահեստի նաւազներուն թիւն է քանի հազար, մինչդեռ հաւանական թշնամիներէն մէկը կրնայ ութսուն հազար հոգի հանել: Մեքենաներու ծառայութեանը համար ալ հազար հոգիի պակաս կայ: Լորտ Պէրէսֆորտ յարեց թէ հիմակուան դրութիւնն ալ դէշ է, վասն...

...

## ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

Լորս Քիչնէրի վերադարձը.— Պոէրները.— Անգլիական զինուորներուն վերադարձը.—Նպաստաւոր նշաններ:

Լոնտոն, 21 յունիս.— Լորտ Քիչնէր, երկուշաբթի (առջի օրը) Բրիտորիայէն Պրեթորիա...

...

ռուսը կամ գիւղերուն մէջ հաստատելու համար, բայց դժբաղդաբար անտեսական պայմանները արգելք կ'ըլլան անոնց այդ բաղձանքներուն իրականացմանը: Լորտ Քիչնէրի բրած հրաւէրը, հանքերուն համար, շատ բարեպատեհ է. արդէն գըլխաւոր ընկերութիւններ միջոցներ ձեռք կ'առնեն հանքերու մակերեւոյթին վրայ գործաւորներ բանեցնելու, սորեկներոյ աշխատութիւնները ընկերներուն պահելով:

## ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Երեսփ. ժողովին մէջ.— Ծերակոյտին նիստը.— Զինուորական երկամեայ ծառայութիւնը.— Ողջունում մը.— Զրոյց մը.— Մարքինիի աղէտը.— Հումպէր-Քրաւֆորտի գործը:

Երեսփ. ժողովի անցեալ ուրբաթ օրուան նիստին մէջ՝ Պ. Սէմպա հարցապընդում մը բրաւ, Բարիզ այցելող կարգ մը օտարնոցի հանրապետական երեսփոխաններու նկատմամբ կառավարութեան բըռնած ընթացքին վրայ: Բանախօսը հասկնալ ուզեց թէ արդի կառավարութիւնը ինչ ընթացքի պիտի հետեւէր, եթէ նորէն...

...

# Նեղքին Լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.—Իւլայի երկրորդ աստիճան պատուոյ Հալէպի Իվզաֆի հաշուակալ Աճէմ Բասիմ էֆ.ի: Սամիէի աստիճան Իզրաֆի օսմ. հիւպատոս Նեճիպ պէյի:

—Պէտէթէնի քէթխուտա անուանուեցաւ կոյս. խոհանոցին Օճագ Պաշը Քեամիլ աղա:

—Երկրորդ կարգի Օսմանիէ պատուանշան պատուեցաւ Պ. Ֆրէտէրիք Թէտամթի Թոնէի: Երկրորդ կարգի Օսմանիէ եւ մասնաւոր նախարարութեան Թղթակցութեան ճիւղին մեծէյեր Խալիտ պէյի: Չորրորդ կարգի Օսմանիէ ստացած Պ. Թօսի Կարապէի:

...

